



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
CENTRE FOR POLICY STUDIES



Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար

Ծրագիրն իրականացվում է գործընկերների մասնակցությամբ.

Res Publica հիմնադրամ / Visegrad Insight (Լեհաստան)

Յագելոնյան ակումբ (Լեհաստան)

Բուդապեշտի հանրային քաղաքականության վերլուծությունների ինստիտուտ
(Հունգարիա)

«EUROPEUM» եվրոպական քաղաքականության ինստիտուտ (Չեխիա)

EURACTIV Սլովակիա



Klub
Jagielloński



BUDAPEST
INSTITUTE

WISEGRAD / INSIGHT



Վիկտորյա Մելքոնյան

Տեղեկատվական հասարակության
ձևավորումը և էլեկտրոնային
կառավարման արդյունավետ գործարկումը՝
Հայաստանում մասնակցային
ժողովրդավարության զարգացման
գրավական

Սույն հրապարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից լեհ, հունգարացի, չեխ և սլովակ փորձագետների հետ համագործակցությամբ իրականացվող «Վիշեգրադյան քաղաքի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի շրջանակում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Լեհաստանի, Հունգարիայի, Չեխիայի և Սլովակիայի կառավարությունների կողմից՝ Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի միջոցով, որի նպատակը Գենտրոնական Եվրոպայում հարատև տարածաշրջանային համագործակցության առաջխաղացումն է:

This paper is published within the Advancing Reforms in Armenia with Visegrad Four's Know-how project framework.

The project is co-financed by the Governments of Czechia, Hungary, Poland and Slovakia through Visegrad Grants from International Visegrad Fund. The mission of the fund is to advance ideas for sustainable regional cooperation in Central Europe.

Grant #22010376

Additional information: <https://centreforpolycystudies.org/en/Visegrad>

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Տաթևիկ Ղազարյան
Series editors: **Armen Grigoryan, Tatevik Ghazaryan**

© Քաղաքականության հետազոտական կենտրոն / Centre for Policy Studies
© Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամ / International Visegrad Fund

Երևան, հունիս 2021
Yerevan, June 2021

«Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի նպատակը Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով առաջնահերթություն համարվող որոշ ոլորտներում բարեփոխումներին նպաստելն է:

Ծրագիրն, ի լրումն Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականության, անդրադարձել է հետևյալ թեմաներին.

- քաղաքացիական անվտանգության ոլորտի բարեփոխում,
- առողջապահության ոլորտ,
- այլընտրանքային էներգետիկայի զարգացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կառավարում և տեղեկատվական հասարակություն:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կազմակերպվել է երեք առցանց սեմինար՝ Վիշեգրադյան քառյակի երկրներից փորձագետների մասնակցությամբ, իսկ այնուհետև՝ փորձագիտական քննարկումներ, ինչպես նաև նախապատրաստվել են հոդվածներ՝ քաղաքականության առաջարկներով:ⁱ

ՔՀԿ հետազոտող, Երևանի պետական համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի ասպիրանտ Վիկտորյա Մելքոնյանի հոդվածն ամփոփում է ծրագրի տեղեկատվական տեխնոլոգիաներին, էլեկտրոնային կառավարմանը և տեղեկատվական հասարակությանը նվիրված հատվածը:

Սեմինարներում փորձագետների զեկույցները և սույն հրապարակումը չեն արտահայտում Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

This article by CPS researcher and PhD candidate at the Faculty of International Relations of Yerevan State University, Victoria Melkonyan, summarises the findings of the project module covering IT sector, e-governance and information society development. Opinions expressed in the experts' presentations and in this paper do not represent those of the International Visegrad Fund or any public or private institution.

ⁱ Սեմինարների տեսագրություններն ու ծրագրին առնչվող այլ նյութեր հասանելի են <https://centreforpolystudies.org/Visegrad> կայքում:

Վիկտորյա Մելքոնյան

Տեղեկատվական հասարակության ձևավորումը և էլեկտրոնային կառավարման արդյունավետ գործարկումը՝ Հայաստանում մասնակցային ժողովրդավարության զարգացման գրավական

Նախաբան

Ժողովրդավարության հիմքում ընկած տեղեկատվության ազատության սկզբունքն արտացոլում է յուրաքանչյուրի կողմից անարգել կերպով տեղեկատվություն հավաքագրելու, փոխանցելու և տարածելու իրավունքը: Պետական մարմինների գործողություններին, հասարակական-պետական շահին առնչվող տեղեկատվությունը պետք է լինի հավաստի, հասանելի և բազմազան, ինչի երաշխավորմանն էլ պետք է ուղղված լինեն պետական կառավարման մարմինների ռազմավարական քայլերը:

Ժամանակակից աշխարհում էլեկտրոնային կառավարման համակարգերը տեղեկատվության հասանելիության և դյուրին կիրառության ապահովման արդի գործիքներ են, որոնց ներդրման հիմքում պետություն-քաղաքացի արդյունավետ ու թիրախային երկխոսության տեսլականն է: Դրանք ուղղված են ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդմանը, հասարակական կազմակերպություններին այդ կերպ զարգացնելուն ու կայունացնելուն՝ ապահովելով մարդու հիմնարար իրավունքների ու ազատությունների կենսագործումը:

Այդուհանդերձ, ըստ օրինաչափության, ժամանակակից միտումները ուղեկցվում են նոր մարտահրավերներով: Տեղեկատվության ազատությունը թվայնացմանը զուգահեռ հանդիպում է տեղեկատվական անվտանգությանն առնչվող բազմաթիվ խնդիրների, որոնց շարքին են դասվում կիրքերանվտանգության հիմնախնդիրները կամ համացանցային տիրույթում առկա տեղեկատվության պահպանման, փոխանցման, հասանելիության, գաղտնիության և ամբողջականության ապահովումը վտանգող ցանկացած գործողություն:

Մյուս կողմից, ժողովրդավարական հարաբերությունների զարգացմանը միտված թվայնացման գործընթացները հաճախակի առաջ են քաշում հենց հակաժողովրդավարական խոսույթ՝ առանցքում պահելով քաղաքացիների հավասար մասնակցային իրավունքի իրացման, հասարակության բոլոր շերտերի կողմից տեղեկատվություն ապահովող հարթակների կիրառության ու հասանելիության, բուն հանրային շահն արտացոլող հարթակների գործառնության, ինչպես նաև պատշաճ հետադարձ կապի ապահովման հիմնահարցեր:

Այս և մի շարք այլ մարտահրավերների չեզոքացումն առաջնային կարևորության խնդիր է ցանկացած պետության համար, քանի որ

ուղղակիորեն առնչվում է պետության ազգային անվտանգության ապահովմանը՝ ներառյալ քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում:

2000-ականներից ի վեր Հայաստանում իրականացվում են էլեկտրոնային կառավարման զարգացմանը նպաստող նախաձեռնություններ: Դրանք ենթադրում են կառավարման արդիականացման և տեխնիկական վերազինման ձեռնարկների շարքեր, որոնք մեծամասամբ իրականացվում են Եվրոպական Միության, Միավորված ազգերի կազմակերպության և Համաշխարհային բանկի ֆինանսական աջակցությամբ՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության կողմից:

Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) տվյալներով ՀՀ պետական համակարգում էլեկտրոնային արդիականացման գործընթացը և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը տեղի է ունենում արագ և հաստատուն կերպով: Նույն աղբյուրը սակայն հաստատում է, որ հասարակության վերաբերմունքը և օգտագործման մակարդակը համընթաց չէ պետության կողմից առաջարկվող էլեկտրոնային ծառայությունների ներդրմանն ու զարգացմանը:¹

Հարց է առաջանում. արդյո՞ք էլեկտրոնային կառավարման ներդրումն ուղիղ համեմատական չէ նորարարական-տեղեկատվական հասարակության ձևավորմանը և արդյո՞ք էլեկտրոնային կառավարման ներդրման հաջողված լինելու հիմնական չափումը պետություն-քաղաքացի արդյունավետ ու անխափան հաղորդակցման ապահովումը չէ:

Այս հարցերին պատասխանելու համար անհրաժեշտ է համապարփակ անդրադարձ կատարել թվայնացման միջազգային միտումներին, Հայաստանում տեղեկատվական հասարակության ստեղծման մարտահրավերներին և էլեկտրոնային կառավարման համակարգերի շուրջ առկա որոշ հիմնախնդիրներին:

Տեղեկատվական հասարակության փոխակերպման առանձնահատկությունները

«Տեղեկատվական հասարակությունը» կամ, ինչպես Դանիել Բելլն է նշում 1973թ. լույս տեսած «Հետինդուստրիալ հասարակության հարձակումը. սոցիալական կանխագուշակման փորձ» աշխատությունում, «հետինդուստրիալ հասարակությունը» 20-րդ դարի կեսերի սոցիալական կառուցվածքի փոփոխությունների հետևանք է, որը որոշիչ սոցիալական ձև դարձավ 21-րդ դարում՝ առաջին հերթին ԱՄՆ-ում, Ճապոնիայում, Ռուսաստանում ու Արևմտյան Եվրոպայում: Ըստ նրա՝ հետինդուստրիալ հասարակության հիմնական սոցիալական առանցքը տեղեկատվությունն է:²

¹ https://www.ekeng.am/hy/sub/e_manage

² Տեր-Հարությունյան Գագիկ, «Տեղեկատվական հասարակության» որոշ հարցեր, 17 հուլիսի 2008 թ., http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=2240

«Տեղեկատվական հասարակություն» եզրույթը շատ հաճախ փոխարինվում է «գիտելիքի հասարակություն» կամ «գիտելիքահենք հասարակություն» եզրույթներով: Դրա հիմքում է այն պնդումը, որ գիտելիքի աղբյուրը տեղեկատվությունն է՝ սուբյեկտի (առարկա, գործողություն) մասին ստացված ինֆորմացիան:

Ուշագրավ է Էդգար Քալանթարյանի դիտարկումը տեղեկատվական հասարակության անցման չորս հիմնական դրսևորումների շուրջ.

1. Տնտեսության կառուցվածքային փոփոխություններ՝ հատկապես աշխատուժի բաշխման և տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներում,
2. Համակարգչային գրագիտության անհրաժեշտության գիտակցման տարածում, կրթության տեղեկատվայնացում, հասարակության տեղեկատվայնացման տարածում,
3. Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներին աջակցություն կառավարության կողմից,
4. Բացասական դրսևորումների տարածում (համակարգչային վիրուսներ, հարձակումներ ենթակառուցվածքների տեղեկատվական բաղկացուցիչների վրա և այլն):³

Նկատելի է, որ տեղեկատվական հասարակության փոխակերպման ճանապարհին վերը թվարկված դրսևորումները ոչ միայն ուղեկից են գործընթացին, այլև տեղեկատվական հասարակության ձևավորման և՛ հիմքն են, և՛ տրամաբանական արդյունքը: Չստորադասելով ոչ մեկի էական ազդեցությունն այդ գործընթացում, կքննարկենք Հայաստանում առկա ոլորտային ձեռքբերումներն ու խնդիրները՝ հիմք ընդունելով հենց այս դրսևորումները:

Տեղեկատվական հասարակության երկու կարևորագույն բաղկացուցիչներն են՝ տեղեկատվությունն ու տեխնոլոգիաները: Արդի ժամանակաշրջանում տեղեկատվությունն այն մեկնարկային միավորն է, որից սկսվում է անձի սոցիալականացման գործընթացը, որն ուղեկցվում է կրթությամբ, իրավունքների ու պարտականությունների պատշաճ գործառնմամբ, այլ խոսքերով՝ հասարակական էակին բնորոշ բոլոր հնարավոր հատկանիշներով և գործընթացներով: Տեղեկույթը կամ տեղեկատվությունը հանդիսանում է ռազմավարական ռեսուրս և գնահատվում է ավելի բարձր, քան ավանդական նյութական պաշարները:⁴

Մյուս կողմից, ժամանակակից տեխնոլոգիաներն այն «միջնորդներն» են, որոնք մարդկային գործոնի հետ զուգահեռ ապահովում են տեղեկատվության ձևավորումը և դրա հանրային շրջանառությունը: Ժամանակակից

³ Քալանթարյան Էդգար, Տեղեկատվական հասարակությունը արդյունավետ կառավարման երաշխիք, Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2018, էջ 280:

⁴ Քոթանջյան Հայկ, Աթանեսյան Արթուր, Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրների ու գերակայությունների վերլուծությունը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում: Հայկական բանակ 1 (87), 2016, ISSN 1829-0108, էջ 9:

պետություններում ու հասարակություններում բազմակողմ հաղորդակցությունների վարման և ծառայությունների մատուցման հարաբերություններն ուղեկցվում են տեխնոլոգիաների անհրաժեշտ ներդրմամբ ու կիրառմամբ: Ստացվում է, որ տեղեկատվության և տեխնոլոգիաների անքակտելի միության արդյունքում էլ ձևավորվում են ժամանակակից տեղեկատվական հասարակությունները:

Արդյունքում կարելի է արձանագրել, որ տեղեկատվության բնույթից, որակից և հասանելիությունից, ինչպես նաև տեխնոլոգիաների զարգացման մակարդակից ու պատշաճ և ապահով գործառնումից է կախված այն, թե արդյո՞ք հասարակությունը կկայանա՝ որպես տեղեկատվական միավորում-հանրույթ, թե՞ կմնա իր ավանդական հիմքերում՝ առանց արդիականացման որևէ հավակնության:

Ապատեղեկատվության տարածումը, տեղեկատվական պատերազմները, միջազգային լրտեսությունը, վտանգավոր և ռիսկային բովանդակությամբ նյութերի տարածումը հանդիսանում են ժամանակակից տեղեկատվական հասարակությունների համար առաջնային մարտահրավերներ, քանի որ դրանք ուղղակի ազդեցություն են թողնում տեղեկատվության որակի և տեխնոլոգիաների, այս դեպքում, համացանցի անվտանգ և արդյունավետ օգտագործման վրա: Այս մարտահրավերները համաշխարհային են և բնութագրական բոլոր այն երկրներին, որտեղ կա համացանցի հասանելիություն կամ տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառություն: Բնականաբար, կախված իշխող վարչակարգերից, պետությունները տարբեր կերպ են արձագանքում ծառացած մարտահրավերներին:

Ավտորիտար վարչակարգերը սահմանափակում կամ ի սպառ արգելում են սոցիալական ցանցերի կիրառությունը, իսկ ժողովրդավարականները փնտրում և գտնում են պայքարի ավելի լիբերալ մեթոդներ:⁵ Ավելին, այս մարտահրավերներին առերեսվելու կարողությունն ուղղակիորեն կապված է տվյալ հասարակության մեդիագրագիտության աստիճանից: Առավել զարգացած երկրներում թվային տեխնոլոգիաների օգտագործման հասարակական հմտություններն ու կարողություններն ավելի բարձր են՝ ելնելով տեխնոլոգիաների կիրառման ավելի վաղ փորձառությունից: Տեղեկատվական գործոնի դերը մարդու կենսագործունեության բոլոր ոլորտներում շարունակաբար աճում է:

Հայաստանում մեդիագրագիտության և գրագետ տեղեկատվական հասարակության ստեղծման ուղղությամբ շարունակաբար իրականացվում են մի շարք նախաձեռնություններ՝ ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական մակարդակներում:

⁵ Մկրտչյան Հայկուհի, «Տեղեկատվական անվտանգություն» հասկացության զարգացումը: «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2017 № 3 (24), էջ 55-62, էջ 1:

2003 թ. մինչ օրս Լոնդոնում գործող Media Diversity Institute կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչ Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ - Հայաստանը ծրագրեր է իրականացնում ավանդական լրատվամիջոցների, սոցիալական մեդիայի և նոր տեխնոլոգիաների զարգացման և հնարավորությունների կատարելագործման ուղղությամբ՝ ի նպաստ Հայաստանում քաղաքացիական հասարակության զարգացման:⁶

2012 թ. մինչ օրս Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը իրականացրել է մեդիագրագիտության ուղղությամբ տարբեր ծրագրեր՝ ներառյալ Հայաստանում մեդիագրագիտության զարգացման հայեցակարգի մշակումը, որի նպատակն է պետական մարմինների, դպրոցների, բուհերի, ուսումնական կենտրոնների, լրատվամիջոցների և շահագրգիռ այլ կողմերի հետ համատեղ հստակեցնել մեդիագրագիտության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերն ու հետագա անելիքները:⁷

Հանրային լրագրության ակումբը մեդիագրագիտության զարգացման ուղղությամբ իրականացնում է տարաբնույթ ծրագրեր, ներառյալ՝ «Ավելի անվտանգ առցանց միջավայր. նախադպրոցական հաստատություններում մեդիագրագիտության ուղղությամբ միջամտություն», երիտասարդների աջակցության «Power up Youth Armenia» ծրագիրը և այլ ծրագրեր՝ ԱՄՆ դեսպանատան և Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի օժանդակությամբ:⁸

Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի համագործակցությամբ 2020 թ. մեկնարկեց «Մեդիա իրավունք» կրթական ծրագիրը, որի նպատակն է գործող և ապագա լրագրողներին, իրավաբաններին և հարակից մասնագիտությունների ներկայացուցիչներին տրամադրել արդի գիտելիք մեդիադաշտի իրավական կարգավորումների վերաբերյալ՝ մեդիաէթիկայի և աշխատանքային իրավունքների ու պարտականությունների հստակ պահպանման համար:⁹ Ծրագրի տրամաբանական շարունակությունը նախատեսվում է ամրապնդել համալսարանում մագիստրոսական կրթական ծրագրի ներդրմամբ:¹⁰

Քաղաքականության հետազոտական կենտրոնը 2020 թ. մեկնարկեց լայնածավալ ծրագիր՝ «Ապատեղեկատվության վերլուծություն և փորձագիտական կարողությունների զարգացում» խորագրով, որը ոլորտի փորձագետների հետ համագործակցությամբ իրականացրեց մեդիագրագիտության զարգացման ոչ ֆորմալ կրթական ծրագիր՝ առանցքում պահելով վիրտուալ մարտահրավերներին՝ ատելության խոսքին և ապատեղեկատվությանը դիմակայելու հմտությունները՝ ի նպաստ

⁶ <https://mdi.am/>

⁷ <https://mediainitiatives.am/ways-to-develop-media-literacy-in-armenia/>

⁸ <https://pic.am/current-projects/>

⁹ <http://www.ysu.am/news/hy/Media-right-educational-program>

¹⁰ <http://ysu.am/gender/hy/A-new-educational-program>

արդյունավետ հանրային և հասարակություն-պետություն հաղորդակցության կառուցման:¹¹

Զուգահեռաբար, տեղեկատվական հասարակության ստեղծման ճանապարհին կարևոր գործունեություն սկսեցին իրականացնել համակարգչային միջադեպերին, այլ կերպ՝ կիբեռհանցագործություններին առնչվող ծրագրերով հանդես եկող կառույցները:

2002 թ. Համաշխարհային բանկի ծրագրի շրջանակում Հայաստանում ստեղծվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը, որն աջակցում է Հայաստանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը: Կիբեռհանցագործությունների կանխարգելման շրջանակում մեկնարկել է «CyHub Armenia» նախաձեռնությանը, որի նպատակն է ստեղծել կիբեռանվտանգության հետազոտական լաբորատորիա՝ երկրում կիբեռանվտանգության հարցերը բացահայտելու, լուծելու և կանխարգելելու համար:¹²

2009 թ. ի վեր «Ապահով համացանց Հայաստան» ծրագիրը նպատակ ունի մարդկանց ուշադրությունը հրավիրել համացանցի և այլ տեղեկատվական տեխնոլոգիաների ապահով և անվտանգ օգտագործման վրա: Այդ նպատակով իրականացվում են տարբեր նախաձեռնություններ՝ պայքարելու ապօրինի, վնասակար և ոչ պատշաճ բովանդակության դեմ, պաշտպանվելու վիրտուալ ցանցերում առաջացող հնարավոր ռիսկերից:¹³

2011 թ. այլընտրանքային ԶԼՄ-ների զարգացման և հայկական մեդիալանդշաֆտում սոցիալապես կարևոր բովանդակության մշակման նպատակով հիմնվեց «Badu.am» առցանց հարթակը:¹⁴

«Ինտերնետ հանրություն» հասարակական կազմակերպությունը 2017 թ. հուլիսին հիմնեց Ինտերնետ կառավարման առաջին հայկական դպրոցը (ArmSIG), որի նպատակն է Հայաստանի տարբեր բուհերի ուսանողների համար կազմակերպել ինտերնետ կառավարմանն առնչվող մի շարք դասընթացներ:¹⁵

Վերոնշյալ և այլ ծրագրերում նկատելի է նվազ պետական միջամտություն, իսկ շատ դեպքերում՝ դրա իսպառ բացակայությունը: Մա թույլ է տալիս եզրակացնել, որ Հայաստանում տեղեկատվական հասարակության կայացման հիմքում ընկած տեղեկատվական անվտանգության, հասարակության մեդիագիտելիքների ու հմտությունների զարգացման աշխատանքները իրականացվում են մեծամասամբ միջազգային կազմակերպությունների ծրագրային փաթեթների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության շրջանակում: Արտաքին ներդրումային միջավայրի գերակայությունը թելադրում է հստակ ծրագրային

¹¹ <https://centreforpolycystudies.org/Փորձագիտական-կարողությունների-զարգացում>

¹² <https://cyhub.am/>

¹³ <http://safe.am/ar/about.html>

¹⁴ <http://badu.am/>

¹⁵ <https://www.isoc.am/hy/մեր-գործունեությունը/ինտերնետ-կառավարման-դպրոց-armsig/>

պահանջներ, որոնք հաճախակի հակասում են տարածաշրջանային և տեղական ոլորտային առանձնահատկություններին, համապատասխանաբար նաև սահմանափակում են դերակատարների ճկունությունն արտաքին ու ներքին հատկանիշներն ու պահանջները համատեղելու համար: Պետական պատշաճ հովանավորության բացակայության արդյունքում ստվերվում են գիտության այն ուղղությունները, որոնք նկատելիորեն ունակ են ապահովելու ոլորտի գիտական-վերլուծական զարգացումը՝ ստորադասելով նաև գիտության դերն ու նշանակությունը տեղեկատվական հասարակության կայացման գործում:

Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկումը

Թվային կամ էլեկտրոնային կառավարումը պետության կողմից քաղաքացիներին, ձեռներեցներին և գործակալություններին մատուցվող ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացմանն ուղղված քաղաքականությունն է:¹⁶ Պետության կողմից մատուցվող ծառայությունների էլեկտրոնային համակարգերի ներդրումը մի կողմից բարձրացնում է պետական մարմինների հաշվետվողականությունը և աշխատանքի հրապարակայնությունը, մյուս կողմից՝ նվազեցնում է կոռուպցիոն ռիսկերը և չարաշահումները՝ անձնական շփումների էական կրճատման շնորհիվ:¹⁷

Ինչպես նկատելի է սահմանումից, էլեկտրոնային կառավարումը հաճախակի ասոցացվում է էլեկտրոնային ծառայությունների հետ, բայց այն ավելին է, քան միայն ծառայությունները: Առաջնային ու որակյալ հանրային ծառայությունների մատուցմամբ սկզբնավորվում է բազմավեկտոր հաղորդակցությունը պետության ներսում: Հայկ Սուքիասյանի խոսքերով, այս կերպ տեղեկատվական հասարակությունում իշխանությունն ընկալվում է իբրև հասարակական ծառայություն՝ կորցնելով իր գերիշխանությունը. ի՞նչը կարող է ավելի լավ լինել ժողովրդավարական իդեալի համար:¹⁸

Հենց հանրային ոլորտի թվայնացման գործընթացն է առավելապես բացահայտում էլեկտրոնային կառավարման բովանդակությունը, և դա է պատճառը, որ «էլեկտրոնային կառավարումը», «թվայնացումը», «հանրային ոլորտի թվայնացումը» քննարկվում են որպես մեկ ամբողջություն: Թվայնացումը փոխում է հաղորդակցության ընդունված և հաճախակի

¹⁶ Carter, Lemuria, France Bélanger. The utilization of e-government services: citizen trust, innovation and acceptance factors. *Information Systems Journal* 15 (1), January 2005, <https://doi.org/10.1111/j.1365-2575.2005.00183.x>, p. 5.

¹⁷ Քալանթարյան Էդգար, ՀՀ էլեկտրոնային կառավարման արդի վիճակը և զարգացման հեռանկարները: «Բանբեր Երևանի համալսարանի». Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն» 141.6, Երևան 2013 թ., էջ 69:

¹⁸ Սուքիասյան Հայկ, Տեղեկատվական հասարակություն, «էլեկտրոնային կառավարություն» և «էլեկտրոնային կառավարում»: «21-րդ ԴԱԸ» տեղեկատվական-վերլուծական հանդես, թիվ 1 (23), 2009 թ., էջ 76:

կիրառելի ձևերը: Թվայնացման հետևանքները դժվար է կանխատեսել և հասկանալ, քանի որ արդյունքները հաճախակի տարբեր կերպ են արտահայտվում և հանդիպում են այնտեղ, որտեղ ամենաքիչն էին սպասելի:

Թվայնացման գործընթացում ակտիվորեն օգտագործվում են արհեստական բանականության և ավտոմատացման ծրագրային տարրեր, սենսորային տվյալներ, որոշումների կայացման ռոբոտային համակարգեր: Այս ամենը հիմք է հանդիսանում, որ հանրային կապերը դեմ առ դեմ կամ ավանդական ձևաչափից անցում կատարեն մեքենայացված կամ էլեկտրոնային ձևաչափի:

Էլեկտրոնային կառավարման համակարգերը նպաստում են մարդկանց կյանքի որակի բարձրացմանը՝ ծառայությունների որակի բարելավման շնորհիվ: Դրանք ժամանակատար չեն, արագ են աշխատում, ինչպես նաև աշխատում են նույն սկզբունքով բոլոր մարդկանց համար, ինչն ապահովում է ձևաչափի օբյեկտիվությունը:

Միննույն ժամանակ, էլեկտրոնային նորարարության ցանկացած ծրագրային ձախողում հարցականի տակ է դնում դրանց հետագա շահագործման նպատակահարմարությունը, ուղեկցվում է նշանակալի ծախսերով, հասարակության շրջանում ծրագրերի հանդեպ հետաքրքրության ու վստահության նվազմամբ և այլն:

Ծառայության արդյունավետության չափումը երկկողմանի արժեքների և օգուտի ստեղծումն է՝ ծառայությունների մատուցման և ծառայությունների օգտագործման ողջ գործընթացում: Այս գործընթացի հիմքում ընկած են տեղեկատվական տեխնոլոգիաները՝ համացանցի նորարար և ներառական լայն հնարավորություններով: Հետևապես, էլեկտրոնային կառավարման համակարգերի հետ աշխատելիս մարդիկ պարտավորվում են ընդլայնել իրենց թվային գիտելիքները և հմտությունները:

Զուգահեռաբար, էլեկտրոնային համակարգերի օգտագործումն ինքնին ենթադրում է թվային մեկնարկային գիտելիքների ու հմտությունների առկայություն: Սա է հիմնական պատճառը, որ էլեկտրոնային կառավարման համակարգերը ստեղծում են հասարակական-թվային նոր բաժանում (digital divide), քանի որ պատշաճ թվային գրագիտության բացակայությունը, պետական-հանրային ոլորտի աշխատանքների մասին անիրազեկվածությունը ստեղծում են նոր տեսակի բևեռացում, որը տրամաբանորեն չի ենթադրում հասարակության ժողովրդավարական մասնակցության հիմքեր և չի ապահովում հավասարություն և թափանցիկություն:

Եվրոպայում էլեկտրոնային կառավարման ոլորտում ամենաառաջատար երկրներից Շվեդիայում մինչ օրս ամենաշատ քննարկվող հարցադրումը հենց այն է, թե արդյոք թվայնացումը խրախուսում է բացարձակ թափանցիկ ու բաց մասնակցային ժողովրդավարությունն այն դեպքում, երբ շատ քաղաքացիներ և շրջաններ պարզապես դուրս են մնում թվային գործընթացներից: Փաստորեն, անկախ այն հանգամանքից, որ զարգացած ու առաջադեմ ժողովրդավարություններում թվայնացումը և էլեկտրոնային կառավարչաձևի

ներդրումն այլևս մեծ պատմություն ունեցող իրականություն է, ընթացքում դեռ գրանցվում են ձախողումներ և կան էական բացեր:

Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերը կենտրոնացված են ՀՀ էլեկտրոնային կառավարման միասնական հարթակում՝ e-gov.am կայքում: Այն ստեղծվել է 2010 թ.՝ ՀՀ պետական գերատեսչություններին առընթեր էլեկտրոնային կառավարման բոլոր գործիքների և տվյալների մեկտեղման նպատակով: Կայքը ծառայում է որպես միասնական հարթակ և համապարփակ ուղեցույց՝ էլեկտրոնային ծառայություններից հեշտորեն օգտվելու համար:¹⁹

Համակարգի միջոցով հնարավոր է հետևել կառավարության, վարչապետի, փոխվարչապետի որոշումներին, ինչպես նաև կառավարության նիստերի օրակարգերին: Հարթակում կարելի է գտնել ընթացիկ և նախորդ տարիների բյուջետային բաշխումն՝ «ինտերակտիվ բյուջե» գործիքի միջոցով: Ի թիվս մի շարք էլեկտրոնային գործիքների, ակտիվորեն գործարկվում են նաև.

1. *Լիցենզիաների ստացման հայտերի ընդունման համակարգը:* Իրավաբանական, ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերը տարբեր բնագավառներում (առևտուր, առողջապահություն, անվտանգություն, վիճակախաղեր, տրանսպորտ և այլն) գործունեություն իրականացնելու համար կարող են էլեկտրոնային տարբերակով դիմել պետական արտոնագրման համար: Հարթակը նախատեսված է նաև արտոնագրումը վերաձևակերպելու, ուժը կորցրած ճանաչելու, կասեցնելու, ինչպես նաև արդեն իսկ ներկայացրած դիմումները նոր փաստաթղթերով համալրելու համար:²⁰
2. *Մտավոր սեփականության գործակալության էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ:* Համակարգը թույլ է տալիս գյուտերն, օգտակար մոդելներն, ապրանքային նշանները և արդյունաբերական նմուշներն էլեկտրոնային տարբերակով ներկայացնել Մտավոր սեփականության գործակալություն:²¹
3. *Էլեկտրոնային վիզա գործիք:* Թույլ է տալիս պարզեցված ձևով և կարճ ժամանակահատվածում ստանալ մուտքի արտոնագիր:²²
4. *Էլեկտրոնային ստորագրություն գործիք:* Այն էլեկտրոնային փաստաթղթերին կցված ստորագրող անձի նույնականացման համար կիրառվող թվային պայմանանշանների եզակի հաջորդականություն է:²³
5. *Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգ:* Հարթակը թույլ է տալիս ծանոթանալ ՀՀ օրենսդրությանը՝ սկսած միջազգային պայմանագրերից մինչև համայնքների ավագանու կողմից ընդունված որոշումները:²⁴

¹⁹ <https://www.e-gov.am/#block26>

²⁰ <https://www.e-gov.am/docs/licenses.pdf>

²¹ <https://my.aipa.am/>

²² <https://evisa.mfa.am/>

²³ https://www.ekeng.am/hy/sub/digital_signature

²⁴ <https://www.arlis.am/>

6. *Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք*: ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի շտեմարան, որը թույլ է տալիս ոչ միայն ծանոթանալ նախագծերին, այլև մասնակցել դրանց քննարկմանն, ընդունմանը և հանդես գալ առաջարկություններով՝ հիմնավորելով դրանց կողմ կամ դեմ լինելը:²⁵
7. *Դատական տեղեկատվական համակարգ*: Հարթակը ծառայում է որպես դատական գործերի արխիվ, տեղեկատվություն ընթացիկ և սպասվող դատական գործերի մասին՝ ժամանակացույցի և անցկացման վայրի մանրամասներով:²⁶
8. *Կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման գործիք*: Ընձեռում է հնարավորություն կարճ ընթացակարգով (մեկ պատուհան) գրանցել կազմակերպություն և ստանալ տեղեկատվություն արդեն գրանցվածների մասին:²⁷
9. *Էլեկտրոնային հարցումների միասնական հարթակ*: Քաղաքացիները կարող են առցանց եղանակով տեղեկատվություն տնօրինող պետական մարմիններին ուղղել իրենց հարցումները, դիմումները կամ բողոքները և սահմանված ժամկետում ստանալ դրանց պատասխանը:²⁸

Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման համատեքստում քննարկվում է նաև հանրագրերի ինստիտուտի զարգացման հրատապությունը: Համաձայն ոլորտի մասնագետների, դրա էլեկտրոնային գործարկումն ինքնին լրացուցիչ խթան կհանդիսանա հանրագրերի ինստիտուտի արդյունավետ գործունեության և հանրային նշանակության հարցերում հասարակության մասնակցության մեխանիզմների ներդրման գործում:²⁹

Կարևոր հիմնախնդիր է շարունակում մնալ էլեկտրոնային հանրագրերի ներկայացման և պատասխանների ստացման հրապարակայնացման անհրաժեշտությունը՝ այդ թվում և՛ անհատական և՛ կոլեկտիվ հանրագրերի, ինչպես նաև մի շարք այլ տեխնիկական հարցեր՝ կապված հարթակի նկարագրի, վարման կարգի և դրանցում ներգրավված սուբյեկտների պարտականությունների մասով:³⁰ Հանրագրերի հրապարակայնացման հնարավորությունը թույլ կտա բարձրացնել այս կամ այն հարցի շուրջ հանրային իրազեկվածության բարձրացումը և գաղափարների ու լուծումների այլընտրանքների առաջադրումը: Այս կերպ հանրագրերի շուրջ կհամախմբվեն աջակիցներ և կխթանվի հասարակական հաղորդակցությունը:

Կորոնավիրուսը և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրումը

²⁵ <https://www.e-draft.am/>

²⁶ <http://www.datalex.am/>

²⁷ <https://www.e-register.am/>

²⁸ <https://e-request.am/hy/>

²⁹ Քրմոյան Սուրեն, Ղուկասյան Շուշանիկ, «Էլեկտրոնային գործիքների ներդրումը՝ հանրագրի ինստիտուտի խթանման համատեքստում»: «Օրինականություն», № 115 2020, ISSN 1829-4219, էջ 38:

³⁰ Նույն տեղում, էջ 40:

Կորոնավիրուսի համավարակը, որպես առողջապահական լուրջ ճգնաժամ, արագացրեց էլեկտրոնային կառավարման ներդրման տեմպերը և հասարակությանն առավելապես ներգրավեց դրանց օգտագործման գործում: Առանձնահատուկ հաջողություններ են գրանցվել հեռահար աշխատանքային ու կրթական գործիքակազմի պարագայում: Մինչ յուրաքանչյուր մասնավոր կազմակերպություն իր սեփական գործիքակազմն էր մշակում՝ հեռահար աշխատանքն ապահովելու համար, պետական տարբեր գերատեսչություններ աշխատանքի և կրթության անխափան շարունակականության ապահովման համար գործի դրեցին էլեկտրոնային կառավարման մեխանիզմներ: Տրամաբանորեն, ճգնաժամի սպոնտան ու անկանխատեսելի բնույթը մարտահրավեր էր այն առումով, որ նախկինում լայնորեն և խորությամբ չկիրառված թվային գործիքակազմն այլևս ենթակա էր պարտադիր կիրառման, և դրա պարտադիր լինելը հանգեցրեց պետական-հասարակական ռեսուրսերի ու ներուժի մոբիլիզացիայի:

Սա իրականում բնորոշ է գրեթե բոլոր տեսակի ճգնաժամերին՝ չհաշված տարերային աղետները: Մարդկային շփման սահմանափակումը կամ անհնարինությունն ինքնըստինքյան ենթադրում է այլընտրանքների մշակում և կիրառություն: Հայաստանի օրինակով կարող ենք ենթադրել, որ համավարակի պայմաններում թվայնացման թռիչքաձև զարգացումը կհանգեցնի հետագայում կրթության և աշխատանքի հիբրիդային ձևաչափի զարգացմանը:

Շվեդիայի Լինչոպինգ քաղաքի քաղաքապետարանի թվայնացման ու էլեկտրոնային կառավարման վարչության բիզնես ծրագրերի պատասխանատու Թոմաս Լարսոնի խոսքերով, Շվեդիան թվայնացման գործընթացի մեջտեղում է և առջևում դեռ շատ անելիքներ կան:³¹ Համավարակի ընթացքում Լինչոպինգի հաջողված էլեկտրոնային նախաձեռնություններից մեկը «սոցիալ-տնտեսական աջակցության ծրագրի էլեկտրոնային ձևաթուղթն» է, որը լրացնելով հնարավոր է շրջանցել նախկինում դիմելու «մի քանի պատուհան» ձևաչափը, որն ուղեկցվում էր մեծաքանակ թղթային շրջանառությամբ: Մյուս նորամուծությունը «Խոսքից տեքստ» (Speech to text) հավելվածն է, որի նպատակը վարչական ոլորտի աշխատանքային բեռի նվազեցումն է: Հատուկ մշակված ծրագիրը բանավոր խոսքը տեքստի է վերածում՝ խոսելու ընթացքում ավտոմատացված կերպով պատրաստելով տեքստեր և լրացնելով ձևաթղթեր: Այս կերպ տեքստը հավաքելու համար անհրաժեշտ ժամանակը զգալիորեն կրճատվում է:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի համավարակի ընթացքում կրթական ոլորտում աշխատանքների արդյունավետության և կրթության որակի և անխափան ընթացքի ապահովմանն ուղղված պետական

³¹ Հարցազրույց Շվեդիայի Լինչոպինգ քաղաքի քաղաքապետարանի թվայնացման ու էլեկտրոնային կառավարման վարչության բիզնես ծրագրերի պատասխանատու Թոմաս Լարսոնի հետ, հուլիս 2020:

քաղաքականությունը: Հաշվի առնելով, որ Շվեդիայում ավագ դպրոցների աշակերտների համար կեսօրյա նախաճաշն անվճար է, գործարկվել է հավելված, որն աշակերտներին թույլ է տալիս բաժանորդագրվել և նախնական պատվերների իրականացմամբ մոտակա ռեստորանների ցանցից ստանալ իրենց հասանելիք ամենօրյա ճաշ-փաթեթները: Այս և մի շարք այլ օրինակներ, ըստ ոլորտի պատասխանատուի, վկայում են այն մասին, թե որքան հմտորեն կարելի է օգտագործել համացանցի լայն հնարավորությունները՝ ճգնաժամերը հաղթահարելու համար:

Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից կազմակերպված «Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի շրջանակում կազմակերպված վեբինարում Լեհաստանի թվային կառավարման հարթակը ներկայացնելիս «Լեհաստանի Ստարթափ Հաբի» (Startup Hub Poland) գործադիր տնօրեն Մաչեյ Սադովսկին առանձնացրեց միջազգային և տեղական ներդրումների կարևորությունը ցանկացած երկրում էլեկտրոնային կառավարման զարգացման գործում:

Թվային կառավարման ենթակառուցվածքը՝ Gov.pl հարթակը ներառում է շուրջ 300 կայք, 113.000 հոդված և 192.000 թղթապանակ: Միայն 2020 թ. մարտ ամսին 46 միլիոն մարդ է այցելել այդ հարթակը: Այն առաջարկում է բազմաթիվ ծառայություններ՝ ինչպես կազմակերպությունների, այնպես էլ անհատների համար: Ըստ Մ.Սադովսկու՝ ամենահաջողված ծառայություններից են կացության գրանցումը, ծնունդների գրանցումը, ընտրողների գրանցումը, էլեկտրոնային արտոնագրումը (E-Patenting), էլեկտրոնային դեղատոմսերի դուրս գրումը (ePrescription), ուսանողական տոմսի բջջային հավելվածը և այլն:³²

Համավարակի շրջանում Լեհաստանում արդյունավետ էլեկտրոնային գործիք դարձավ էլեկտրոնային այցն առաջնային բուժօգնություն տրամադրող բժիշկներին: Բժշկական ծառայության համար գրանցումից հետո բժիշկներն անձամբ են կապ հաստատում հիվանդների հետ՝ խորհրդատվության և ծառայությունների մատուցման համար: Բժիշկները կարող են լինել Լեհաստանի տարբեր քաղաքներից և բժշկական հաստատություններից, ինչն էապես խթանում է բժիշկների հավասար ու ակտիվ աշխատանքային գործունեությունը՝ անկախ տարածաշրջային պատկանելությունից: Այս ծառայությունը զգալիորեն արդյունավետ է նաև հիվանդների համար, քանի որ նրանք ստիպված չեն երկար սպասել կամ շատ վաղ հերթագրվել՝ շնորհիվ բժիշկների աշխատանքի հավասար բաժանման սկզբունքի:

Ձուգահեռաբար, Լեհաստանում գործարկվեցին «Տնային կարանտին» և «Stop Covid-ProteGo Safe» հավելվածները: Առաջինը գործարկվել է 2020 թ. ապրիլի 1-ից. նպատակը կարանտինում գտնվող մարդկանց սեփական առողջության մասին հոգ տանելուն աջակցելն է և ինքնազգացողության փոփոխությունները մշտադիտարկելը: Երկրորդ հավելվածը գործարկվեց 2020 թ. հունիսի 9-ից՝

³² «SS ոլորտի, էլեկտրոնային կառավարման և տեղեկատվական հասարակության զարգացում» վեբինար, 22 փետրվարի 2021 թ., <https://www.youtube.com/watch?v=dNSjWEiVUO0>:

նպատակ ունենալով բարձրացնել հանրության իրազեկվածությունը կորոնավիրուսին առնչվող հարցերի վերաբերյալ: Այդ նպատակով հավելվածում գրանցվողներին պարբերաբար ուղարկվում է պաշտոնական տեղեկատվություն համավարակի ու դրան վերաբերող պետական ու մասնավոր կարգավորումների մասին:

Նույն ընթացքում ստեղծվեց «Տեղեկատվական կենտրոն» հարթակը՝ շուրջօրյա աշխատառեծիմով: Այն բաղկացած է թեժ գծից, կայքից և արագ արձագանքման առցանց երկխոսության բաժնից, որը հնարավոր է օգտագործել վիրուսին առնչվող ցանկացած հարցի դեպքում:

Հայաստանում համավարակի տարածմանը զուգահեռ գործարկվեց երեք բջջային հավելված՝ «Քովիդ-19 Հայաստան», «Ինքնամեկուսացածների ինտերակտիվ քարտեզ» և «Ճամփորդում եմ առանց կորոնավիրուսի»: Առաջինն իր գործարկման սկզբնական փուլում նկատելի հետաքրքրություն առաջացրեց հասարակության այն շրջանակներում, որոնք ակտիվորեն օգտվում էին սմարթֆոններից և իրազեկված էին ծառայության մասին: Հարթակն ստեղծվել էր ՀՀ Պարետի պաշտոնական գործառույթների շրջանակում: Այն պարբերաբար թարմացվող տվյալների հարթակ էր, որը ներկայացնում էր կորոնավիրուսով վարակվածության, բուժվածների և մահացության ամենօրյա թիվը: Հավելվածը ներառում էր թեստավորման հնարավորություն՝ սեփական ինքնազգացողությունը ճիշտ գնահատելու և դրա հիման վրա բժշկի դիմելու կամ չդիմելու որոշում կայացնելու համար: Այն նաև պարունակում էր հիգիենայի և անվտանգության կանոնների մասին հրահանգ-խորհուրդների պատուհան:³³

Մյուս հավելվածը, որը գործարկվեց 2020 թ. հունիսի 19-ից, ինտերակտիվ քարտեզ էր, որը 100 մետր ճշգրտությամբ ներկայացնում էր ինքնամեկուսացած հիվանդների տեղակայությունը: Ավելի ուշ հավելվածն արդեն տալիս էր տեղեկատվություն կորոնավիրուսով վարակվածների տարիքային կազմի և սեռի մասին:³⁴

«Ճամփորդում եմ առանց կորոնավիրուսի» հավելվածը գործարկվեց արդեն 2021 թ. փետրվարի 1-ից որպես պիլոտային ծրագիր՝ Հայաստանից Ռուսաստան և հակառակ ուղղությամբ ճամփորդելու ընթացքում պարտադիր կիրառության համար: Քաղաքացին ճամփորդելուց 72 ժամ առաջ պետք է հանձնի կորոնավիրուսի թեստ, որի պատասխանն անձնագրի սկանավորման արդյունքում հայտնվում է հավելվածում և ներկայացվում համապատասխան մարմնին՝ սահմանն անցնելիս:³⁵

³³ <https://apps.apple.com/am/app/covid-19-armenia/id1505830061>

³⁴ <https://www.covid19healthsystem.org/countries/armenia/livinghit.aspx?Section=1.4%20Monitoring%20and%20surveillance&Type=Section>,
<https://covid19-map.armed.am/>

³⁵ <https://www.ekeng.am/hy/covid-19>

Հայաստանում համավարակի արագ արձագանքման ծրագրերի շրջանակում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կրթության կառավարման տեղեկատվական համակարգում (emis.am) գործարկեց էլեկտրոնային օրագիր և էլեկտրոնային մատյան համակարգերը, որոնք նպատակ ունեն հեռահար ուսուցման ընթացքում դպրոցների և ուսուցիչների իրականացրած քայլերն ավելի արդյունավետ և տեսանելի, իսկ աշակերտների կրթությունն՝ առավել մատչելի դարձնել: Գործիքների ներդրման հիմնական մարտահրավերն այն էր, որ նախկինում չունենալով կիրառության փորձառություն, պետք էր սուղ ժամանակահատվածում համատեղել դրանցից օգտվելը կրթական դասընթացների գործիքների բուն կիրառության հետ, ինչը, բնականաբար, մարտահրավեր էր և՛ ուսուցիչների և՛ աշակերտների ու նրանց ծնողների համար:

Եզրակացություն և առաջարկներ

Սույն աշխատանքում քննարկելով Հայաստանում տեղեկատվական հասարակությունը և էլեկտրոնային կառավարման համակարգերը, կարող ենք արձանագրել. Հայաստանում թվայնացման գործընթացը զարգացման լուրջ հեռանկարներ ունի, իսկ հասարակությունը՝ տեղեկատվական դառնալու մեծ ներուժ:

Այնուամենայնիվ, առանցքում պահելով այդ ճանապարհին ընթացիկ մարտահրավերներն ու բացթողումներն, առաջարկում ենք մեծ թափով իրականացնել հայեցակարգային փոփոխություններ և գործարկել թիրախային ծրագրեր: Առաջնային քայլ են մնում էլեկտրոնային կառավարությունը պետական ապարատի գործունեության առաջնահերթություն դարձնելու պետական ջանքերը: Դրանք ենթադրում են բազմավեկտոր պետական հովանավորություն՝ թվայնացման և էլեկտրոնային կառավարման զարգացման համատեքստում:

Հնարավոր լուծումներն են.

- *Ոլորտի մասնագետների պատրաստման ծրագրերի իրականացումը:* Թե՛ պետական ապարատում, թե՛ դրանից դուրս կարևորագույն հիմնախնդիր է մնում ոլորտի մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացը: Հայաստանում էլեկտրոնային կառավարման համակարգերի գործարկման համատեքստում հետադարձ կապի պատշաճ կազմակերպումը դեռ բարելավման խնդիր ունի: Հետադարձ կապի որակը կարևորագույն նշանակություն ունի, քանի որ անհրաժեշտ է ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլև հաղորդակցության ապահովման համար: Վերջինիս ոչ գրագետ ու անբավարար իրականացումը կարող է էականորեն նվազեցնել էլեկտրոնային համակարգերի օգտագործման տեմպերը և խոչընդոտել քաղաքացիական մասնակցությունը:

- *Թեմատիկ ներառումները բարձր դասարանների, ավագ դպրոցների և համալսարանների առարկայացանկում:* Կրթական գործընթացներից դուրս մնացած հասարակական լայն շերտերին էլեկտրոնային կառավարման համակարգերին առավել մոտեցնելու նպատակով մարզային տարբեր թիրախային խմբերի շրջանակում կարելի է անցկացնել կարճաժամկետ դասընթացներ, փորձագիտական հանդիպումներ և տեղեկատվական արշավներ: Այս համատեքստում կարևոր դերակատարում ունի տեղական ինքնակառավարման մարմինների միջամտությունը և ակտիվ համագործակցությունը տարածաշրջանային հասարակական կազմակերպությունների հետ: Հաջող և կառուցողական համագործակցությունը կխթանի նաև ՏԻՄ-երի հանդեպ վստահությունը և քաղաքացիական հասարակության կարևոր դերակատար հանդիսացող տարածաշրջանային հասարակական կազմակերպությունների և նախաձեռնությունների հզորացումը: Ֆորմալ և ոչ ֆորմալ կրթական համակարգի համապատասխանեցումը տեղեկատվական հասարակության պահանջներին ժամանակի հրամայականն է:
- *Գիտության ներգրավումը թվայնացման գործընթացում:* Ոլորտի համապարփակ ուսումնասիրությունը, միջազգային հաջողված և ձախողված փորձի քննարկումը, պետական մշակույթի առանձնահատկություններից բխող գործիքակազմը և վերջինիս արդյունավետ գործարկումը պետք է իրականացվի կիրառական գիտության մակարդակում: Վերջինիս համար անհրաժեշտ է միջպետական և միջգիտական ակտիվ համագործակցությունը՝ փորձի և գիտելիքի շարունակական փոխանակմամբ, միջազգային միտումների ներդրման կամքով և պատրաստակամությամբ: Գիտության թվային գծի զարգացումը կենթադրի նաև տեղեկատվական հասարակության և էլեկտրոնային կառավարման մասին հայկական գրականության ձևավորում, թվային և ֆիզիկական գրադարանների հիմնում, ոլորտի հետազոտողներին և փորձագետներին պետական օժանդակության ցուցաբերում:
- *Մարզերի բնակչության ներգրավումը թվայնացման գործընթացում:* Էլեկտրոնային կառավարման գործիքակազմի օգտագործումը չպետք է սահմանափակվի քաղաքացիական հասարակության դերակատարների, ոլորտին քաջաձանոթ մարդկանց և խմբերի շահագրգռվածությամբ: Էլեկտրոնային համակարգերի ապակենտրոնացումը և դրանց կիրառության մասին հանրամատչելի տեղեկատվության տարածումը ՀՀ մարզերում և համայնքներում կծառայի ի նպաստ տեղական ժողովրդավարության զարգացման՝ հասարակական լայն շերտերին ներգրավելով գործընթացում:
- *Ներդրված էլեկտրոնային համակարգերի հետևողական և շարունակական գնահատումը:* Աշխատանքը կպարզի թվային այս կամ այն համակարգի հետագա գործարկման նպատակահարմարությունը՝ դրանք բարելավելով հասարակության պահանջներին և թվային գրագիտությանը համապատասխան: Պարբերական մշտադիտարկումը թույլ կտա վերհանել առկա բացթողումները և համակարգը համալրել նոր տեղեկատվությամբ և գործիքներով: